ՀԱՎԵԼՎԱԾ 1

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	**Զբոսաշրջային ծառայությունների մասնագետ**
Դերը՝	*Կազմում է զբոսաշրջային փաթեթ, ընտրում է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունները, կազմում փաթեթի նախահաշիվ և ներկայացնում ղեկավարությանը: Ներկայացնում է փաթեթը համապատասխան գործակալներին: Միջոցներ է ձեռնարկում փաթեթի բարելավման ուղղությամբ:* *Կառավարում և վերահսկում է ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքը:*
<u>Խնդիրների բնագավառ 1</u>. Զբոսաշրջության փաթեթի նախագծում	
Աշխատանքային գործընթաց	- Ընտրում է զբոսաշրջության ձևը (պատմամշակութային, էկո, գյուղական, էքստրիմ) - Ընտրում է հաճախորդների կատեգորիան (տարիք, սեռ, ազգություն, կրոն, հետաքրքրություններ և այլն). - Ընտրում է սեզոնայնությունը. - Որոշում է վայր կամ շրջագայության երթուղին. - Որոշում է փոխադրամիջոցի տեսակը. - Որոշում է կացարանի տեսակը, կարգը, ռճը. - Որոշում է սննդի կազմակերպման ձևը. - Ընտրում է ժամանցի ձևն՝ ըստ հաճախորդների կատեգորիայի և մշակում է ծրագիրը:
Կատարման չափանիշները	• փաթեթը նախագծված է:
<u>Խնդիրների բնագավառ 2.</u> Կապերի հաստատում և գործընկերների հետ բանակցությունների վարում	
Գործընթաց	- Կապվում է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպություններին, պարզում է նրանց կողմից առաջարկվող պայմանները. - Բանակցում է ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ. - Որոշում է կայացնում ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրության վերաբերյալ:
Կատարման չափանիշ	• առկա է համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների ցուցակ՝ ըստ առաջարկվող պայմանների: • առկա է համագործակցող կազմակերպությունների ցուցակ: • առկա է փաստարկ նախընտրելի կազմակերպության վերաբերյալ:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u> Փաթեթի կազմում և ներկայացում կազմակերպության ներսում	
Գործընթաց	- Ձևակերպում է փաթեթը. - Կազմում է փաթեթի արժեքի նախահաշիվ. - Ներկայացնում է փաթեթն իր ղեկավարությանը:
Կատարման չափանիշները	• առկա է ամբողջովին ձևավորված փաթեթ. • որոշված է փաթեթի արժեքը. • փաթեթն արժանացել է ղեկավարության հավանությանը:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u> Ստորաբաժանման աշխատակազմի կառավարում	
Գործընթաց	- մշակում է աշխատանքի մարտավարություն /աշխատանքային պլան/ (ռազմավարությունը մշակում է ղեկավարությունը) - մշակում է իր ստորաբաժանման աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունները (պաշտոնի աննձնագիր), կատարում է աշխատանքի բաշխում իր նրանց միջև. - վերահսկում է աշխատակազմի աշխատանքը.

	- հանդես է գալիս նորանոր գաղափարներով. - հարթում է կոնֆլիկտները աշխատակազմի ներսում. - «գնահատում է» ստորաբաժանման ռեսուրսները:
Կատարման չափանիշները	• առկա է աշխատանքային պլան: • յուրաքանչյուր աշխատակից գիտակցում է իր պարտականությունները: • առկա են այլընտրանքային մարտավարական ծրագրեր: • աշխատակազմի ներսում առկա են բարիդրացիական հարաբերություններ:
<u>Խնդիրների բնագավառ 5.</u> Փաթեթի իրացում	
Գործընթաց	- Ընտրում է զբոսաշրջային գործակալներ, որոնց ներկայացվելու (առաջարկվելու է) փաթեթը. - Իրականացնում է փաթեթի շնորհանդես. ներկայացնում է փաթեթը գործակալներին. - Բարելավում է փաթեթը՝ հաշվի առնելով գործակալների առաջարկություններն ու դիտողությունները:
Կատարման չափանիշները	• փաթեթը գործակալներին ներկայացման անձանագրություն. • առկա է գործակալների եզրակացությունը: • փաթեթը բարելավված է:
<u>Խնդիրների բնագավառ 6.</u> Հետադարձ կապի, գնահատման և վերլուծության իրականացում	
Գործընթաց	- Փաթեթի իրականացումից որոշակի ժամանակ անց կատարում է համապատասխան հարցումներ՝ փաթեթի վերաբերյալ արձագանքներ ստանալու նպատակով. - Իրականացնում, է փաթեթի արդյունավետության, գրավչության և ... վերլուծություն և գնահատում. - Վերանայում ու բարելավում է փաթեթը:
Կատարման չափանիշները	• որոշված են փաթեթի առավելություններն ու թերությունները. • թերությունները շտկված են:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	
Պատասխանա-տվությունը	Զբոսաշրջության մենեջերը պատասխանատու է իր աշխատակազմի արդյունավետ աշխատանքի համար, մշտապես պահպանում է կապը համագործակցող կազմակերպությունների հետ, պատասխանատվություն է կրում զբոս. փաթեթից բխող թերությունների և դրանց շտկման համար: Զբոսաշրջության մենեջերը պաշտպանում է իր կազմակերպության շահերը համագործակցող կազմակերպությունների շրջանակում, վարում է բանակցություններ, իր պարտականությունների (սահմանվում են գործատուի կողմից) շրջանակներում ընդունում է ինքնուրույն որոշումներ՝ ելնելով կազմակերպության շահերից:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք	
Լեզուները	• Հայերեն՝ գերազանց • Առաջին օտար լեզու՝ C1 • Երկրորդ օտար լեզու՝ B2
Համակարգիչը	• MS Word՝ գերազանց • MS Excel՝ գերազանց • Internet Explorer՝ գերազանց
Գիտելիքը	• Զբոսաշրջության ոլորտին վերաբերող ՀՀ օրենսդրություն • Կառավարման հիմունքներ • Հոգեբանության հիմունքներ • Վաճառքի և շուկայաբանության հիմունքներ • Զբոսաշրջության աշխարհագրություն • Զբոսաշրջության սոցիոլոգիա • Փոխադրման և տեղավորման միջոցների մասին

	• Հայաստանի և այլ երկրներ ազգային տոներն ու հիշատակի օրերը • Ազգերի առանձնահատկությունները • Հյուրանոցների և ռեստորանների մասին • Հասարակության հետ կապերի (PR) և գովազդի տեխնոլոգիաներ • Տնտեսագիտության և հաշվապահական հաշվառման հիմունքներ • Կենսագործունեության անվտանգություն • Աշխատանքային հարաբերություններ և էթիկա
Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը	• Հաղորդակցման գերազանց հքտություններ • Ղեկավարման կարողություն (մոտիվացնել աշխատակազմին և համակարգել նրանց գործողությունները դրված նպատակին հասնելու համար). • Տրամաբանական մտածողություն • Մաթեմատիկական հաշվարկներ կատարելու կարողություն • Հաշվետվություններ կազմելու կարողություններ • Բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու կարողություն • Ժամանակի կառավարում (սեփական և այլ անձանց ժամանակի կառավարում) • Տեղեկատվության հետ ճիշտ աշխատելու ունակություն • Իր արտաքին տեսքին և անձնական հիգիենային հետևելու կարողություն • Գրասենյակային տեխնիկայի հետ աշխատելու հմտություն • Աշխատանքի և աշխատակազմի նկատմամբ պատասխանատվության զգացում

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՄԱՍՆԱԳԵՏԻ «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԵՏ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ՝ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Մասնագետի «Զբոսաշրջային ծառայությունների մասնագետ» որակավորման շնորհման՝ մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման չափանիշներն են՝

1. համապատասխան պետական կրթական (որակավորման) չափորոչի բոլոր մոդուլների ուսումնառության արդյունքներով սահմանված մասնագիտական գիտելիքները, որոնց ստուգումն իրականացվում է համալիր թեստային հարցման միջոցով։ Թեսթը բաղկացած է վերոնշյալ բոլոր ուսումնառության արդյունքներին վերաբերող՝ ընդհանուր թվով 95 հարցից։

   Արդյունքը համարվում է բավարար, եթե ճիշտ պատասխաններ են տրվել թեսթային առաջադրանքի հարցերի առնվազն 95%-ին։
2. մասնագիտական կարողությունները, որոնց ստուգման համար պահանջվում է կատարել հետևյալ գործողությունները՝
   - համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ կապերի հաստատում
   - բանակցում ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ.
   - զբոսաշրջային փաթեթի կազմում.
   - մրցակցային թերթի կազմում.
   - զբոսաշրջային փաթեթի նախահաշվի կազմում

- փաթեթի շնորհանդեսի իրականացում
- փաթեթի բարելավում

Արդյունքը համարվում է բավարար, եթե վերոնշյալ գործողությունների առնվազն 90%-ը կատարվել է չափորոշչով սահմանված՝ համապատասպան կատարման չափամիշներին համաձայն՝ պահպանելով անվտանգության տեխնիկայի կանոններն ու հիգիենայի պահանջները։